

ՀԱՆԴԵՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐՔԱՆԱԶՈՒՐԿ ՄԱՐԾԿ (*)

Գ.

Մեր արդէն փոքրիկ ընկերութիւնը շորորդ տարւոյն վերջը, զգալի կերպով փոքրկացաւ: Ոմն մեռաւ, երկուքը՝ ուսմունքնին չաւարտած, պաշտօնով գաւառները գնացին. և միւս երկուքը՝ Բեգրապուրկի համալսարանէն՝ Գիւնվինը անցան: Մեր քաղաքացի հինգ հոգի միայն մնացինք. արդէն կէս տարի կար, որ ես թողած զհամալսարանը՝ փոքրիկ ւրագրի մը վրայ կ'աշխատէի: Մախալով՝ մտադիր կ'աշխատէր որ հետամտաց (candidat) կարգն անցնի. յաջող էր գործը. կ'ուղէր վարժապետաց (magister) հարցաքննութենէն անցնիլ, և մնալ համալսարանին մէջ: Տեսուչն և ոմն ի վարժապետաց, այդ խորհուրդը իրեն տուին. ասկէ աւելի լաւ և ապահով վիճակ չէր կրնար ըլլալ նորա համար: Ազատ կրնար զբաղիլ իր ուսման, և տաժանակիր բազմաշխատ մօրը հանդիստ տալ: Պաւլէ քաջալերուած Տեսչին խօսքերով մտադիր ևս սկսաւ աշխատիլ: Երբեմն կը հանդիպէին նոցա տունը, կը սկսէինք երգել. այլ չկար առաջուան չէնութիւնը. մեզի բան մը կը պակասէր: Զուարթ նիւթի մը վրայ խօսած միջոցնիս, կը յիշէինք մեր մեռած ընկերն, որ սուր լեզուին հետ՝ ունէր միանգամայն երաժշտութեան վրայ տեղեկութիւն, զուարթութիւննիս կը դառնանար ակամայ. յիշելով մեր բաժա-

նեալ ընկերները, սրտերնիս կը տըխրէր. կենաց վրայ առաջուան աչոք չէինք նայեր. քանի գնաց՝ բնաւորութիւննիս ծանրացաւ, զանազան մտածութիւնք և հարցեր արթնցան մոքերնուս մէջ, որոնց և ոչ չուրը ունէինք առաջ: Մեզմէ փոքրագոյնը՝ իրաւագէտը՝ անյաջողութիւն կրեւով սիրոյ մէջ, որոշեց որ չարժէր ապրիլ անգամ, զուարթութիւնը տխրութեան փոխուեցաւ: Մեր մէջէն քաջագոյնը Մախալով էր, որ աշխատելով հին ձեռագրի մը վրայ, կը ծիծաղէր սիրահար ընկերով վրայ: Ընկերը՝ նեղանալով կը զրուցէր, թէ դեռ Պաւլէ բոլորովին անփորձ է, և երբ իրեն նոյնը հանդիպի, թող այն ատեն խօսի:

— Ոչ երբէք զայնպիսին կը սիրեմ, կը պնդէր Պաւլէ:

— Դու չես գիտեր, որպիսին պիտի սիրես. սէրը պայման՝ սահման չունի:

— Ոչ. տաքութեամբ կը պատասխանէր Մախալով, ես զայնպիսին կը սիրեմ որ զիս հասկընայ, սիրէ իմ երևակայութիւններս և զաղափարներս, խորհի և զգայ՝ ինչպէս ես: Երբէք չեմ սիրեր զայնպիսին որ զիս նուաստացընէ:

— Ժամանակէն առաջ մի մեծաբաներ, կը յիշես զնատեժտին:

— Կը յիշեմ, — ինչ հետեանք:

— Ազատամիտ երիտասարդ էր. բոլորովին իր կեանքը ազգին նուիրեալ. թշնամի էր զրօսանաց. հիմա...

— Ուրեմն...

— Այժմեա գիշեր ցորեկ ժողովեալը:

ներ (club) և ծալտեալ պտրահանդէս, ներ կը քայէ, իր կողակցին հետ . ուր ազգ, ուր միաց :

— Այդ ինչ օրինակ է . ըսել է որ Նատէժտին ոչ աւելի ոչ պակաս՝ խեղճին մէկն է : Երբ հասկը հաստատ կերպով նպատակի մը կը դիմէ, կնոջ պատճառաւ չի չեղիր իր ճամբէն . ոչ, անկարելի է սիրել զայնպիսին :

— Չէ թէ միայն չի չեղիր, այլ բոլորովին ճամբէն դուրս կ'ելլայ . և հարազատ հայրը տունէն դուրս կը վարէ :

Մախալով ուսերը վեր ձգելով, մէկդի հրեց զիմացի բառգիրքը . սկսանք չայ խմել, և ընդհատեալ խօսակցութիւնը վերստին չսկսանք :

Այս խօսակցութիւնը հարցաքննութենէն առաջ էր . նոյն միջոցին ես ընտանեկան պատճառաւ մը թողով զԲեդրպուրկ հայրենիքս գնացի, ու հօն մինչև աշուն մնացի : Գեղը՝ գիր մը ստացայ, յորում ընկերներէս մէկը կը գրէր, թէ Պաւլէ փառաւորապէս անցուց հարցաքննութիւնը և ՚ի Պաւլովք չահաւոր դասեր գտնալով՝ հօն գնաց : Կըյաւելուր բարեկամս, թէ Պաւլէ շատ պիտի չյոգնէր աշակերտին հետ, և ամառը հանգչելով, ՚ի դարձին պիտի պատրաստէր մշտնականի ձառք (disser-tation) . այն միջոցին անընդհատ ռոճիկը պիտի ստանար : Մարթա Պարիսովնա դեռ նոյն տան մէջ է . Պաւլէ խոստացաւ շաբաթը երկու անգամ գալ զինքը տեսնալու :

Ուրախացայ ինչպէս որդւոյն՝ նոյն և մօրը վրայ : « Հուսկ ուրեմն, մտածեցի, փորձութեան տարիներն կը լսնան . կ'ընդունի Պաւլէ բեմական դասախօսութեան պաշտօնը, և խեղճ, չարակիր, բաղմահոգ և բազմատանջ կինը հանգիստ կ'առնու » :

Բեդրպուրկ դառնալուս միւս օրը՝ խնդին գնացի Մախալովեանց տունը : Պաւլէ տունը չէր, Մարթա Պարիսովնա շապիկներ երկթէ անցընելու վրայ էր : Շատ ուրախացաւ պառաւը զիս տեսնալով, և չէր ուզեր թողուլ առանց չայի :

— Շատ՝ խիստ շատ ուրախացայ, զուրցեց ինքնիրեն, չորս կողմը վեր վար պատրաստութեան հետ ըլլալով : Որչափ յիշեր եմ անցեալ տարիները . կու գայիք մեզի . . . ինչ ուրախ և արևոթմիլ օրեր . . . ոմն այս, ոմն այն կողմն գնացիք, ես միայն մինակ մնացի :

— Միթէ ամենը գնացին :

— Այո՛, միայն Շումանով մնաց . նա՛ խիստ քիչ անգամ կու գայ ինձի : Գարձեալ մէկուն տուեր է խելքը . և զիշեր ցորեկ չբաժնուիր անկէ :

— Պաւլէն ինչպէս է . նորա վրայ ինձի քիչ մը տեղեկութիւն տայիք . . . ինչ կ'ընէ . . . ուր է . . . դարձաւ :

— Դարձաւ եկաւ, աշխուժութեամբ կրկնեց պառաւը, երբ որդւոյն համար հարցուցի . . . երկու շաբաթ կայ՝ որ հօս է . . . լսեցիք, գիտէս . Պաւլէ առաջին աշակերտ աւարտեց :

— Այո՛. գրեր էր Շումանով :

— Առաջին աշակերտ աւարտեց . սոնքալով կրկնեց Մարթա Պարիսովնա . ինքը ուսուցիչ (lecteur) փիլիսոփայութեան, շնորհաւորցուց ինձի և իրեն : Իս չկրցայ, աղաւնեակս, զիմանալ, ոկսայ լալ, էւ երբ միւս վարժապետներ հետգհտէ սկսան շնորհաւորութեան մաղթանքներ զրուցել, ինձի այնպէս երկցաւ որ ճխալէս սիրտս պիտի պատռէր, խենթի պէս ձգեցի դուրս ելայ . չէի հասկընար բացուկներուս վազելուն պատճառը, սիրտս չէն, միակերպ աչքերս կը լնցուին : Կը յիշն՝ երբ մարդոյը աւարտեցիք . այն ատեն ևս չէն էի, այլ այժմ՝ անհամեմատ աւելի : Այն ժամանակը կը մտածէի, ինչ պիտի ընենք ՚ի Բեդրպուրկ . այժմ ամեն բան կարգի մտած է . Աստուած ինքը բարեկարգեց, վարժապետը ինքը զրուցեց . Պ . Մախալով, դուք այժմ մտաք ճամբուն մէջ . . . Աստուծով ձեռք զարկէք . . . անունը ինչ է . . .

— Մրցանակի ճառիս :

— Այո՛, այո՛ . Աստուծով անոր ձեռք զարկէք . . . ես ուրախութենէս չէի գիտեր ինչ ընելիքս :

— Հիմա Պաւլէ շատ զբաղած է, հարցուցի:

— Ինչ բսել է, ինչպէս կ'աշխատի. . . ռոճիկն ալ կը ստանայ:

— Շուտով տուն կը դառնայ:

— Խօսք տուաւ շուտով դառնալու, չեմ գիտեր. . . Երբեմն շուտով կը դառնամ, կ'ըսէ, և ուշ կը դառնայ: Նա այժմ օրիորդ մը կը պատրաստէ դասարանի. . . Ստուած գիտէ ինչպիսի. . . և ուր. . . բան մը կը սորվեցընէ:

— Զգոյշ եղիք, չըլլայ թէ սիրահարուի. կատակով աւելցուցի:

— Տէրս հետը ըլլայ. երկտասարդ է. մէկ մը լմնցնէր ամեն բան, յետոյ լաւ կ'ըլլար՝ կարգուէր: — Էս երկու ժամ սպասեցի և առանց զՊաւլէն տեսնալու դարձայ. շարժեմ մը նորէն եկայ և դարձեալ զՊաւլէն տունը չգտայ:

— Դասի գնացած է, հարցուցի:

— Դասի, պատասխանեց Մարթա Պարիսոփեա:

— Միթէ ամեն օր կ'երթայ:

— Գրեթէ ամեն օր:

— Լաւ է գոնէ վարձը:

— Ոչ ինչ, անվարձ կը պարապի: Պարտիդի մը մէջ բարեկամացեր են, ու խնդրեք է աղիկը որ օգնէ իրեն. . . աղքատ աղիկ է, դասերով կ'ապրի՝ աղնուական ցեղէ. հայրը՝ չեմ գիտեր ուր տեղ՝ նախագահ եղած է. իսկ հօր եղբայրը՝ խորհրդական. . . ինքը որք է. . .

— Տեսած էք զինքը, հետաքրքրուեցա՞մք հարցուցի:

— Ոչ, չեմ տեսած, չէ եկած մեր տունը. ինչո՞ւ հարցուցիք:

— Այնպէս, հարցուցի:

Քանի քանի անգամ գնացի և միշտ զՊաւլէն տունը չգտայ. վերջին անգամ տունն էր, և այն՝ վերադգեստը հագնելու վրայ՝ որպէս զի երթայ. Նա ուրախակցութիւն ցցուց զիս տեսնալուն. և զուրցեց որ չերթար. ևս դիտեցի որ կ'ուզէ երթալ և որոշեցի որ չկենամ:

— Քանի մը վայրկեանի համար եկած եմ. . . գործ ունիմ, ըսի. դու մը կողմը պիտի երթաս:

— Հեռուն, դէպ 'ի ֆէսքի:

— Եհէ, մոքէս անցաւ, ամեն օր այնչափ տեղ երթալ անվարձ, մինչդեռ հարկաւոր աշխատութիւնը իրեն կը սպասէ. ծայրը բան մը պիտի ըլլայ. մեր զգօնը. . . սիրահարեալ է:

— Շատ բարի, բարձրաձայն ըսի, ևս ևս քնամենոք պիտի երթամ. միատեղ երթա՞նք, ճամբան կը խօսինք:

Աշակերտուհւոյն մասին հարցուցի որք չըրի. Պաւլէի քանի մը խօսքը բաւական եղան մոքէս անցածը հաստատեալու. թէպէտ նա երկու անգամ միայն ինչեց զՍիննա Սեմէնովնա, աշխատելով միանգամայն որ անտարբեր երևնայ. այլ դէմքը և ձայնը՝ զսիրտը կը մատնէին: Զգուշացայ և ևս որ մոքէս անցածը չիմանայ: Բաժնուելու միջոց հարցուցի.

— Տունն ևս կիրակի օր:

— Ոչ, զբաղած եմ, աճապարելով զրուցեց, պէտք է որ երթամ Ս. Ս. վար. Ժապետին (անունը տուաւ) որ խօսիմ նորա հետ հարկաւոր գրուածքի մը վրայ:

Զհատուցի. կասկածս ճշմարտեցաւ: Կիրակի օր Մարիանեան թէատրոնը գնացի, հօն տեսայ զՊաւլէ օրիորդի մը հետ 'ի միասին: Նա տգեղ չէր, և ոչ ալ գեղեցիկ. երեսին գեղին զոյնը և ձախ թուշին վրայի եղած կոծիծը կ'աւելէին նորա կերպարանաց տեսքը: Աչքերը, յիշաւի, գեղեցիկ էին, այնպէս գեղեցիկ՝ որ մոռցընել կու տային գեղնութիւնն և կոծիծը: Այնչափ կրակ կար նոցա մէջ, կորով և մասամբ ևս արհամարհութիւն, այլ այն մաղխիտական արհամարհութիւնը՝ որ ականայ ևս իրենց կը ձգէ և կը մոգէ շատերուն սիրտը: Հագուած էր շատ պարզ, այլ կոկ և մեծ ճաշակով: Մազերը կարճ կտրած՝ որ հազիւ կը հասնէին ճերմակ և կանգուն օձեաց: Թե թե՛ Մախալովին հետ կը քայլէին թատեր դալթին մէջ: Պաւլէ զիս տեսնալուն պէս չփոթեցաւ. կամայ ականայ բարեւ մը տուաւ, այլ կանկ չառաւ, աճապարելով գնաց դէպ 'ի սանգուղքը, կարծես՝ վախնալով որ նորէն չը-

հանդիպինք, այլ տես որ հակառակը եղաւ: Ընդ մէջ հետեւեալ հանգիսին, պատահմամբ, նոյն սանդղոց վրայ դարձեալ Պաւլէի դիմացն ելայ, մինչ նա ձեռքին վրայ բրդէ լանջակ մը ձգած՝ սանդուղներէն վեր կ'ելլար և ես վար կ'իջնայի ծխասենեակը երթալու: Զեռք տուաւ և անապարանօք աւելցուց:

— Գնացի Ա. Ա. Վարժապետին, տունը չէր... ճամբան հանդիպեցաւ օրիորդը... ես ալ գնացի...

Քոյրը զրուցածներն կէս ապուշ, անյարմար, ծաղր ու ծանակ ձև մ'ունէր. Լուեցի:

— Խնդրեմ, այս շարժու հրամէ մեզի, զիս միշտ տունը կը գտնաս. զրուցելու միջոց կը փութար որ երթայ գտնայ զօրիորդը:

Խօսքը չերկնցուցի. բաժնուեցանք իրարմէ:

Լրագրի վրայ՝ նոյն շարժու աշխատութիւնս կարծածէս աւելի եղաւ. կարճ միջոց՝ քանի մ'անգամ հանդիպեցայ Մախատլեանց տունը և ըստ առաջնոյն, Պաւլէ տունը չէր, կամ նոր դարձած, կամ երթալու վրայ: Մարտի Պարիսոպս ախաւ հոգալ մնալի, և քանի մ'անգամ գանգատեցաւ ևս:

— Խելքս չի հասնիր այս տղուն գործին, կ'ըսէր, զլուխը երեքընեւով. — առաջները՝ անդադար կ'աշխատէր, գիշերները՝ գիրքը դիմացը կը լոյսընէր... հիմա ամեն բան մէկ դի թողած, ով գիտէ ուր տեղ կ'անցընէ իրիկունները, հարցընես, կը պատասխանէ՝ թէ այն պէս հարկաւոր է. կրկնելու կը վախնաս, վասն զի ցասկոտ բան մը դարձեր է... Ինչ կ'ըլլայ այդ տղուն...

— Սիրահարեալ պէտք է ըլլայ, ըսի, յայտնի է, երիտասարդ...

— Սիրելիս, ատոր ժամանակն է, մինչդեռ ամենահարկաւոր աշխատութիւնը ուսերուն վրայ հեծած է. ինչ կ'ըլլայ երբ որոշուած ժամանակն անցնի, այն ատեն ինչ... Ինչ բանի անչափ հոգս և աշխատութիւնս, անձս մէջ տեղ դրած: Ով Տէր, Տէր, ինչ

ուրախութեան մէջ էի... և յանկարծ...

— Մի այդպէս, Մարթա Պարիսովնա, Պաւլէ տղայ չէ... սպասէ, համբերէ քիչ մը:

— Ինչ դարձեր են կանայք հիմա, կուան ժամանակս, հառաչելով արտաբերեց. ես չեմ հասկընար այդպիսի սէրը. ըստ իս երբ կը սիրես մէկը, խնայէ նորա՝ անձէդ աւելի. սրտացաւ եղիր. աշխատէ ոգնելու. — այս ինչ սէր է. կը սիրեմ, և մարդուն գործին արգելք կ'ըլլամ. և ինչպիսի գործ. ուրիշ գործ կարելի է վերջը ձգել... այս այնպէս գործ չէ... քիչ օր մնաց, շուտով այն ալ կ'անցնի, ոտնիկը կը դադրի: Զէ, աղանեակ, չէ. այն կինը որ մարդուն կորստեան պատճառ կ'ըլլայ և ասպարիզին արգելք, նա չի սիրեր: Երբ այդ աղիկը սիրէր Պաւլէ, կը յորդորէր, կը ստիպէր որ աշխատի, չէ թէ քովը կ'առնուր կը նստէր. կու գայ ժամանակ մէկ մէկու վրայ նայելու: Սիրել և չխնայել մարդու, այդ սէր չէ:

Մեծապէս մեղքըցայ խեղճ կնկան, որոշեցի որ մասնաւոր կերպով խօսիմ Պաւլէի հետ այս նիւթիս վրայ:

Յիրաւի, կը կորսուէր անդառնալի ժամանակը, 'ի դուր կը հանէր իր անցեալ աշխատութիւնքը, և մօրը ջանքն և հոգը:

— Մի այդպէս հոգաք, միսթարելու մտքով զրուցեցի, դեռ եղած բան չկայ, դուք որոշեր լինցուցեր էք. ես միայն ենթադրեցի, իսկ դուք հաստատեցիք: Կարելի է որ նա այժմ գրատունն է և կամ վարժապետին տունը:

— Մի խօսիր զուր տեղ, ձեռքը վարելով, զրուցեց Մարթա Պարիսովնա. — ես լաւ գիտեմ թէ ինչ կերպով նա աշխատութենէ կը դառնայ, և ինչ կերպով նորա քովէն: Ամեն բան ես աչքովս կը տեսնամ, դու ըսես չըսես, արդարացընես չարդարացընես՝ նոյն է. Խօսիլ ինչ հարկաւոր է. բոլորովին փութուեցաւ տղան. ոչ ինծի հետ առաջուան Պաւլէն է, և ոչ քեզի հետ: — Տունը նստած միշտ մոմտանքի մէջ է... իրիկուն ըլլալուն կը սպասէ, ժամը հինգ

զարնելուն պէս, եթէ կրնա՝ դտիր զինքը: Անգամ մը հարցուցի. — «Շուտով կը դառնաս, Պաւլէ», — ինչ նեղութիւն, — «չեմ գիտեր, ասաց. միթէ տղայի եմ, որ ժուժով ժամով տեղ կը զրկես, կու գամ երբոր գամ»: Մի թէ սրտիս ցաւ չէ այս. միթէ ես զնա կը նեղեմ. . . ո՞վ զինքը կը նեղէ. նորա երջանկութեան համար է ջանքս. . . իրեն համար առողջութեան չինայեցի՝ չբազապանցի. . . տեսաւ, կարծեմ. . . պէտք չէր մոռնալ. . . հիմա. . . — խօսքը բերանը լաց սկսաւ.

Խօսք տուի որ սրտէ սիրտ խօսիմ բարեկամիս հետ, ու ձգեցի զնացի:

— Խօսէ հոգիս, խօսէ, թերեւ քեզի մտիկ ընէ. դուք ընկեր էք, դիտէք մէկ-մէկու հետ խօսելուն կերպը. . . ես, ինչ. . . խօսիլ եւ չեմ գիտեր: Անցեալ օրերը, ինչ բան էր զրուցեցի, — «Ո՛հ մարիկ, ասաց, այդ ինչ տեսակ բացատրութիւն է». և ուսերը վեր ձգեց. . . տեսայ որ չսխորժեցաւ. . . Դուն գիտես. . . բեր որդւոյս խելքը զլուխը, հոգիս, օգնէ պառաւեալ մօրը, խնայէ ընկերոջդ. . .

Այդ պարզ խօսքերը՝ որոց մէջէն կը լսուէր անկեղծ ցաւ, սրտիս խորերը ազդեցին. խոստացայ Մարթա Պարիսպոյի ամենայն միջոց բանեցնելու, որ Պաւլէին խեղճ գլուխը բերեմ: Ետեւն ճամբելու ելաւ, շնորհակալ ըլլալով սըրտախօսիկ սրտածմիրիկ խօսքերով:

Երկու օրէն վերջը, մասնաւոր եւ լայն գնացի Մախալովեանց տունը, այն պիսի ժամանակ որ տունը գտնամ զՊաւլէ:

Նա նստած էր բաղմոցին վրայ, մըտած մանց մէջ ընկզմած, ու սիկար կը ծխէր:

— Բոլորովին դիս մոռցար, զրուցեց, ձեռքը դէպ՝ ինձ երկնցընելով. կ'երևայ որ շատ գործ ունիս:

— Համարեա թէ այնպէս. միւս կողմանէ չուզեցի քեզի ալ արգելք ըլլալ. գիտեմ որ դու եւ մինչեւ կոկորդզ ընկըզմած ես զբաղանաց մէջ:

— Սիրտս առաջ չերթար աշխատելու, զրուցեց, վայրկեան մը լուռ կենալէն վերջը. այնպէս գաներ եմ այդ մեռեալ սւսմունքէն, որ ձեռք զարնելու չիգար:

— Սակայն պէտք է զբաղիլ, ժամանակը կ'անցնի, որոշուած ատենը մօտենալով կը մօտենայ:

— Շիտակը՝ ինքս չեմ գիտեր, ըսաւ, մարած սիկարը վար ձգելով և ձեռքով մազերը խառնելով:

Այնպիսի կերպ մը ցցուցի՝ որ իբր թէ անակնկալ խօսքերուն վրայ կը զարմանամ:

— Ինչ կ'ըսես, եղբայր. . . խելքդ գլուխդ է, թէ ոչ. . . այնչափ աշխատութիւն. . . չեմ հասկընար: Այդ բանին վրայ, միթէ հիմա նոր պիտի մտա՞ծես, — գործը որոշուած է, անհրաժեշտ. . .

Սիրտը նեղացած ուսերը սաստիկ վեր ձգեց:

— Ոչ ոք որոշեց. անհրաժեշտութեան հարկ մը չկայ, անգոհ ձայնով մ'արտաբերեց:

— Օրինակի համար, ինչպէս:

— Այնպէս, դիցուք թէ խօսեցայ մեր ցանակի ճառը, սկսայ համալսարանին մէջ դասախօսութիւն ընել. . . վերջը:

— Այդ ինչ հարցմունք է, Պաւլէ:

— Զէ. դու ինձ զրուցէ, վերջը ինչ է. կ'արժէ միթէ գլուխ մաշել այն մեռեալ ուսման վրայ, որոյ վարձ՝ տարին մէկու կէս հազար թուալի է. . . շատ գործ կը տեսնաս այդ փողով: Առանձին պաշտօն մ'ալ այնչափ կրնայ տալ, աւելի եւս. հարկաւոր ալ չէ այնչափ ցնորքներով զլուխ լեցնել. . . դեռ խօսքը չաւարտած, նոր սիկար մը ձեռքն առաւ և սկսաւ ծխել: Պատշաճ չսեպեցի տանը մէջ այս նիւթին վրայ երկար խօսիլ, ու խօսքը կտրեցի: Գանի մը վայրկենէն ետեւ առաջարկեցի երթալու մերձակայ պանդոկը, ուր առաջները խմբովին երթալով, մէկ երկու գարեջուրի շիշեր կը դատարկէինք:

— Երթանք. . . ուստի միտքդ ընկաւ, հարցուց, դէպ՝ ինձ դառնալով:

— Այնպէս . . յիշենք անցեալներն . . միանգամայն 'ի միասին խմենք՝ առթիւ ընոր տպագրեալ յօդուածիս :

— Եթէ կամենաս, երթանք զրուցեց, անդէն ելնալով :

— Ի պանդոկին քիչ մը նստելէն և շիշ մը դարելուր դատարկելէն վերջը, նորէն սկսայ, տան մէջ ընդհատեալ խօսակցութիւնս : Աշխատեցայ համադելու՝ որ անգործութիւնը մէկ զի դնէ, և աշխատի միջանակին վրայ . շատ պատճառներէն և ապացոյցներէն վերջը, աւելցուցի որ մայրը շատ կը մաշուի, և թէ պարտք է նորա սիրտը հանդէսընել և զինքը հանգստացընել : Դու շատ պարտական ես, Պաւլէ, մորդ, զրուցեցի, քեզի համար սրչափ աշխատած է. այժմ դու պէտք է որ աշխատես :

— Գիտեմ, ինչ նոր բան կը սորվեցընես, ըսաւ, շատ աշխատած է. այլ նոյն միջոցին ես քուն չեղայ, աշխատեցայ : Միթէ այդ պատճառաւ պէտք է որ ես զիս մշտնջենաւոր գերութեան դատապարտեմ, որպէս զի հաճոյ ըլլամ մօրս :

— Ո՛վ քեզի գերութեան վրայ կը խօսի, գերութիւնը ուստի մտածեցիր :

— Անոր համար մտածեցի՞ որ ես զաներ եմ այդ մեռեալ ուսմունքէն . — Դու ի՞նչ կը հօգտա իմ մօրս վրայ. մի վախ՛նար, քու վրադ չմնար նորա ապրուստը :

— Պաւլէ :

— Շիտակը՝ ձանձրացուցիք զիս ձեր խրատներով. նա՛ մէկ կողմանէ, հիմա դու ևս սկսար : Ես քեզի արգելք չեղայ, երբ դու համալսարանը թողլով, սկսար լրագրի վրայ աշխատիլ, դու ևս զիս ազատ թող, ես տղայ չեմ :

— Ի՛նչ է միտքդ. կարելի՞ է հարցընել :

— Ես ինքս չեմ գիտեր . . աշխատիլ չեմ կրնար . . յայդմէ գործը . . կարելի է որ ամեն բան թողում, դարձեալ կարելի է որ չարունակեմ :

Հրամայեց՝ որ շիշ մը գինի բերեն, և երբ ծառան գնաց, դէպ՛ ինձ դառնալով զրուցեց .

— Լաւ է խմենք, քան թէ այն նիւթին վրայ խօսինք :

Առաջին գաւաթը իսկոյն դատարկեց, ևցուց երկրորդը . քիչ մը լուռեցնէ վերջը, առանց երեսս նայելու, ըսաւ .

— Կարելի է որ ես կարգուիմ :

— Նորա՛ հետ, կամաց մը հարցուցի :

— Նորա՛ հետ, պատասխանեց, ճերմակ պատին վրայ բան մը դիտելով :

— Պաւլէ :

— Զրուցէ :

— Երկուքդ որո՞ք կ'ընես :

— Պատճառը, հարցուց, դէպ՛ ինձ դառնալով :

— Դու նախ և առաջ սկսած գործդ աւարտէ, վերջը . . ամեն բան թողած . . ինչ պիտի ընես . .

— Ի՛նչ պիտի ընեմ :

— Ինչո՞վ պիտի ապրիս :

— Ուրեմն կամ վարժապետութիւն կամ անօթի մահ, ուրիշ բան կարելի չէ ընել :

— Բայց դու ինչո՞ւ կը թողուս զայն, որոյ համար այնչափ աշխատած ես, խնդրեմ զրուցէ :

— Դեռ ես որոշած չեմ . . դեռ չեմ գիտեր . . նորէն ումպ մը գինի առնելով . . կարելի է նորէն աշխատիմ ճառին վրայ . . թէ չուզեմ . . կը գտնամ այլ գործ . . կարգի կը դնեմ. և կը սկըսինք ի միասին աշխատիլ նորա հետ :

— Սակայն և այնպէս գործդ չաւարտած պիտի կարգուիս :

— Այո՛, այդ որոշուած է արդէն . խնդրեմ այդ նիւթին վրայ մի խօսիր, եթէ կ'ուզես որ յարաբերութիւննիս միշտ նոյնը մնայ. Որոշուած՝ չմնացած է է ամեն բան, այսօր մօրը իմացուցի. միւս օր՝ նա իմն է, մեր սունը կը տանիմ. այս զրուցելով շտկուեցաւ Պաւլէ . — Յոյս ունիմ որ մօրս հաճոյանայ . . նա կը յօժարի ինձի հետ . . խմենք . . :

Մախալովի հարսանիքը կարծածէս աւելի հազիսաւոր կատարուեցաւ . Պաւլէ կարգէ դուրս չէն էր, միշտ աչքը հարսին նայուածքին ու շարժումքին. հարսը՝ հորսանեկան զգեստուց ներքև

աւելի գեղեցիկ էր . զուլսը ծաղիկներ
բով զարդարուած , գոհ կը փայլէր : —
Սիրով մօտենալով ինծի զրուցեց՝ որ
շատ ախորժելի է իրեն բարեկամանալ
Պաւլէի հին բարեկամին հետ , որ մի
միայն է Բեղարպուրի մէջ : Մարթա
Պարիսոփա ինծի տխուր երեցաւ , գոնէ
շատ տարբեր անկէ , ինչպէս կը փա-
փաքէի զինքը տեսնալ որդւոյն հարսա-
նեաց օրը , Հարսը գրեթէ չէր խօսեր
սկեսուրին հետ , և փեսային հետ խօ-
սած միջոց , մնաւան կը կոչէր զնա ,
միշտ աւելցնելով . քու , քուկին մնաւան .
և միշտ կը շեշտէր այդ խօսքը . ձայնին
մէջ արհամարհութիւն մը կը հնչէր : Ես
դարձայ Պաւլէի նայեցայ . բայց նա այն-
պիսի երջանկութեան մէջ էր , որ չէր
կրնար զգալ այդ անախորժ շեշտը :

Շաբաթէ մը վերջը Մոսքուա գնացի ,
ուր մէկ կամ երկու շաբթուան տեղ ,
ամիս ու կէս մնացի՝ գործով . անտի
շխտակ գնացի քրոջ գեղը , որպէս զի
ամառը հանգիստ առնուի . Գեղէն եր-
կու նամակ գրեցի Մախալովի , որոց
երկուսին , մի համառօտ պատասխան
ստացայ : Պաւլէ ինծի կը գրէր , որ լաւ և
երջանիկ է , և ամուսնոյն հետ կը զբա-
ղի կարդալու , երաժշտութեան , և կը
զուարճանան ըստ իրենց կարողու-
թեան . — « Մրցանակի ճառիկ ժամա-
նակը անցաւ , կը գրէր , ռոճիկս դադրե-
ցաւ . հարկ եղաւ փնտռել գործ մը՝ որ
հաց տայ . շնորհակալութիւն Աննայի
մէկ բարեկամուհւոյն , որ գտաւ ինծի
պաշտօն մը հաշուակալութեան : Առա-
ւօտեան ժամը 11էն մինչև կէսօրէն
վերջը ժամը 5 է պաշտօնս . վարձը՝ նոյն
պէս հազար հինգ հարիւր ռուպլի .
(այս տողը կարդացած միջոցիս ինքն
իրենս զրուցեցի , նոյնպէս է այլ ոչ
նոյն) . աւարտելով նամակը , Մախա-
լով կ'աւելցնէր՝ թէ մայրս զքեզ կը բա-
րեէ , շուտով զատ տուն պիտի երթայ
մեզմէ , այն աւելի յարմար և հանգիստ
կ'ըլլայ իրեն . մենք զինքը կ'ապահով-
ցնենք որ հանգչի հոգեբէն » . . .

Երբորդ նամակ մ'ալ գրեցի , այլ պա-
տասխանը չառի . դադրեցայ գրելէն ,

արդէն դարձիս ժամանակը կը մօտե-
նար :

Բեղարպուրկ հասայ երեկոյեան շո-
գէկառօքով . օդը շատ վատ էր . քամի ,
անձրև և այնպիսի թացութիւն մը որ
մինչև ոսկերաց մէջ կը թափանցէր ,
կառք նստայ և գնացի Վասիլեպօքի
կղզին՝ բարեկամիս մէկուն , որ ինքը
միակ' հինգ սենեկաց մէջ կը բնա-
կէր , ուր միշտ կ'իջնայի , մինչև նոր
տուն վարձեալս :

Կառքը կեցաւ փայտաշէն այլ ոչ մե-
ծակառոյց տանը դիմաց , որոյ երկրորդ
յարկին մէջ կը բնակէր բարեկամս .
վարի յարկը լուսաւորած էր պայծառ ,
փողոցին մէջ կը լուէր երաժշտա-
կան գործեաց ձայնը , բարակ շղարչ
վարդոյրէն կը տեսնուէին պարաւո-
րաց դէմքերը :

Երբ փողոցի դուռը բացի ու ներս
մտայ , յանկարծ աչքիս զարկաւ փո-
քրահասակ կնկան մը գէմք , որ կարճ
մուշտակ մը վրան , պատուհանէն ներս
կը դիտէր : Դէմքը լուսաւորած էր պա-
տուհանէն զարկած լուսով և ինծի ծա-
նօթ կ'երևար : Մասնաւորապէս դար-
ձայ նայեցայ և զարմացայ մնացի : Այո ,
նա էր , Մարթա Պարիսոփա . . . հօս
ինչ բան ունի նա : Մօտենալով բար-
ձրաւանդակին կամաց մը զրուցեցի .

— Մարթա Պարիսոփա .

Կիբը իսկոյն իմ կողմն դարձաւ :

— Մարթա Պարիսոփա , դժբ էք ,
ինչ կ'ընէք հօս , զրուցեցի՝ աւելի մօ-
տենալով :

— Կը նայիմ , կը դիտեմ . . . Նորա
զուարճութեանը կը նայիմ . — ասաց և
ձայնը նուաղեցաւ . արցունքները աչ-
քերէն՝ ծերութեան երեսին վրայ բա-
ցած ակօսներէն անցնելով կարճ մուշ-
տակը թրջեցին :

— Որո՞ն չէնութեան . միթէ . .

— Վարեցին զիս , բոլորովին դուրս
ձգեցին . կնկանը ամօթ կը բերեմ . . .
ինծի համար նա կ'ամչնայ . օւթ ռուպլի
կու տան ինծի ամիսը . . . փողը ինչ ը-
նեմ , երբ որդիս ինծմէ կ'ամչնայ : Նա
կը շէննայ , ես ներս մտնալու չեմ հա-

մարձակիր: Միթէ ես քիչ աշխատե-
րեմ' նորա համար. . . տես, ամօթ է. . .
իմա Պաւլիկ, Պաւլէ, իմա երջանկու-
թիւն. . . ես զքեզ միթէ քիչ սիրեցի. .
ինչ օրերու հասայ:

Կ'ուզէր ուրիշ բան մ'ալ աւելցնելու,
այլ չկրցաւ, գլուխը ուսիս վրայ դրաւ,
ձեռքերով վզիս պլուեցաւ, դռդղջալով
սրտին խորերէն լացաւ, ողբաց. . .

ՔՈՌՆԵԼՈՎ

Այս հատուածը, ինչպէս և նախըն-
թացը, թարգմանելով ներկայ տարուոյս
ուսու օրագրէ մը, և տպելով Բազմալի,

պիս մէջ, կ'ուզենք դադափար մը տալ
ազգին ոգւոյն, ոչ 'ի Ռուսաստան բնա-
կող համազգեաց. և երկրորդ կանխա-
զեկոյց ընել հայ պատանեկութեան,
անփորձ հասակին վտանգներն, որով
և օգտաւէտ ծառայութիւն մեր հայկա-
ղուն պառաւեալ մարց: Այս սովորա-
կան սրտաճմիկ դէպքը, զոր ջերմ
հոգւով զրած է հեղինակը, պաղ ա-
րեամբ կարգացողին վրայ, մեզ այն-
պէս կ'երևայ, որ կարելի չէ որ չը-
նէ ազդեցութիւն և չտայ օգտակար
դաս մը երիտասարդին ապագային
համար:

Թարգմ. Հ. ՔԵՐ. Վ. ՔՈՒՇԵՐԵԱՆ

ՅԵՒՐԻՊԻԻԵԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՅՆ

ՄԱՃ ԻՊՊՈՒՆԵՆԱՅ

Զոր ազդէ հրեշտակն թեւեռակայ

Թեւաւ .

Ո՛վ դիք, դու Պոսիդոն, հայր իմ ես դու արդարեւ .
Ազերսից իմոց դու ունկըն մատուցես կամակար .
Թէ զխարդ կորեաւ, ասա, և կամ սրպէս կորակոր
Գաւազանն արդարութեան եհար ըզնա 'ի հարուածս:

Հրեշտակ .

Մէք ծովուն առնթեր կացեալ զեղերբքն աւելոծ,
Սանտերբք զերիւարաց թօթափէպք զվարսագեղս,
Աչք մեր թաթախ յարտասուս. մինչ հրեշտակ որ բանրեր՝
Ասէր՝ թէ ոչ ևս այլ յերկիրս յայս իպպոլիտ կարացե
Ածել զոտս, առ 'ի քէն վրտարանդեալ եղկելին .
Եւ ահա ինքնին լալով բերէր ըզգոյս զայս առ մեզ
ի ծովափն. և ըզկնի նորին ամբոխ բիւրաւոր՝
Սիրելի բարեկամաց հասակակից տողէր գունդ .
Եւ սակաւ մի յետ ժամու 'ի հեծութեանց լրտեալ նա,
« Առ ինչ տըրտունջս այս, ասաց, պարտ է հօրն անսալ բանից .
« Հնապա դուք, քարչեցէք 'ի կառս ըզձիս լրծածիդս .
« Զի ոչ այլ ևս այս իմ քաղաք բընակութեան է կայան »: